2027թ.-ի Սպորտային մարմնամարզության 12-րդ Եվրոպայ իտղամարդկանց և կանանց մեծահասակներ իառաջնության կազմակերպման համար անհրաժեշտ միջոցառումների և աշխատանքների ներկայացում

(<u>ենթակա են մասնակի փոփոխման, վերջնական ներկայացվող պահանջներ կտրամադրենք առաջին համակարգող հանդիպումից անմիջապես հետո</u>)

Ստորև համառոտ ներկայացնում ենք 2027թ.-ի Սպորտային մարմնամարզության 12-րդ Եվրոպայի տղամարդկանց և կանանց մեծահասակների առաջնության, այսուհետ՝ Առաջնություն, կազմակերպման համար անհրաժեշտ միջոցառումների ծավալը՝ ըստ Հայաստանի մարմնամարզության ֆեդերացիայի և Մարմնամարզության Եվրոպական Միության, այսուհետ՝ ԵՄ, միջև կնքված պայմանագրի դրույթների, ընդհանուր *<u>մոտավոր բյուջեն</u>* կազմելունպատակով:

<u>Ներկայացվող պահանջներ.</u>

Կազմակերպիչ ֆեդերացիան/երկիրը (այսուհետ՝ կազմակերպիչ կողմ) հոգում է առաջնության անցկացման բոլործախսերը:

Կազմակերպիչ կողմը պարտավորվում է ստեղծել *տեղական կազմակերպչական կոմիտե* (կազմկոմիտե), որը պատասխանատու է այս միջոցառման համար: Տեղական կոմիտեի պատասխանատուները կամ նրանց պատվիրակները պետք է վարժ տիրապետեն անգլերենին և ողջ միջոցառման ընթացքում լինեն մրցման դահլիճում:

Տեղական կազմկոմիտեի ամբողջական տվյալները՝կառուցվածքը, անվանումներ, կոնտակտային տվյալներ, խոսակցական լեզուներ և այլն, պետք է տրամադրելԵՄ-ին ամենաուշը առաջին պաշտոնական համակարգող հանդիպմանը:

Սպորտային մարմնամարզության Եվրոպայի 12-րդ *առաջնությունը* կանցկացվի, ըստ ստորագրված պայմանագրի, Երևանում 2027 թվականին ապրիլ-մայիս ամիսներին հաստատված օրերին և կտևի11 օր:

Կազմակերպիչ կողմը երաշխավորում է, որ ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ քայլերը ժամկետները և վայրը ապահովելու համար: Շատ կարևոր է տվյալ ամիսների ընտրությունը նաև հյուրանոցային բիզնեսի համար, քանի որ այդ ամիսները հանդիսանում են համեմատաբար ոչ զբոսաշրջային ամիսներ, ինչը նվազեցնում է սենյակների արժեքը, իսկ հյուրանոցների համար ոչսեզոնային պայմաններում կապահովի լրիվ զբաղվածություն: Այս ժամանակամիջոցը հարմար է նաև

եղանակային պայմաններով՝ ինչը կնվազեցնի մարզադահլիճների հովացման կամ տաքացման համակարգերի ծախսերը:

ԵՄպատվիրակություն:

Կազմակերպիչ կողմը հոգում է ԵՄ պատվիրակության հետևյալ անդամների ճանապարհածախսը, ներառյալ վիզաների ծախսը, կացության ծախսերը.

- ԵՄ նախագահը կամ նրա ներկայացուցիչը (1 անձ)
- ԵՄ գլխավոր տնօրեն (1)
- ԵՄ սպորտի համակարգող (1)
- ԵՄ գործադիր կոմիտեի պատվիրակներ, ովքեր հանդես են գալիս որպես բողոքարկման մրցավար (2)
- Տղաների սպորտային մարմնամարզության տեխնիկական կոմիտեի նախագահ և անդամներ (7)
- Աղջիկներ իսպորտային մարմնամարզության տեխնիկական կոմիտեի նախագահ և անդամներ (7)
- Փորձագետ մրցավարներ (6) և մարզասարքերի վերահսկողներ (2) (անհրաժեշտության դեպքում) MAG
- Փորձագետ մրցավարներ WAG (4)
- ԵՄԶԼՄ-երի ղեկավար (1)
- ԵՄ պաշտոնական բժիշկ (1)

Կազմակերպիչ կողմը ԵՄ վերոնշյալ պաշտոնական պատվիրակներին (ցանկը ենթակա է մասնակի փոփոխման) ապահովում է կացություն պաշտոնական հյուրանոցում՝ մեկտեղանի սենյակ պարտադիր ինտերնետ կապով: ԵՄ-ն կտրամադրի անձանց ամբողջական ցուցակ ներառյալ այնանձանց, ում ծախսը ֆեդերացիան չի հոգում, պաշտոնական հյուրանոցում տեղավորելու համար:

Մարզագործիքներ:

Ֆեդերացիան ժամանակին կտեղեկացվի մարզագործիքների պաշտոնական մատակարարի մասին: Մարզագործիքները պետք է հաստատված լինեն FIG-ի (Մարմնամարզության Միջազգային Ֆեդերացիա) կողմից:

Կարևոր.

Անհրաժեշտ է **մրցման** տղամարդկանց և կանանց մարզագործիքների մեկական ամբողջական հավաքածու, նախամրցումային տղամարդկանց և կանանց մարզագործիքների մեկական ամբողջական հավաքածու և մարզումային երկուական ամբողջական հավաքածու: Դահլիճների բոլոր մարզագործիքները պետք է լինեն նույնական (արտադրողի ապրանքանիշ և մոդել): Մարզագործիքների ծախսերը ստանձնում է ֆեդերացիան/երկիրը:

Առաջնությունը կանցկացվի Կարեն Դեմիրճյանի անվան ՄՀՀ-ում, որն ապահովում է 6000 նստատեղ: Մրցումային սրահը պետք է ունենա առնվազն 8մ

բարձրություն. Նախընտրելի է՝ 10: Ամենաքիչը 7մ–ը պետք է լինի ազատ տարածություն՝ հատակից մինչև կախված լույսեր կամ այլ: Ջերմաստիճանի և խոնավության հաշվարկված ինդեքսը պետք է փոքր կամ հավասար լինի 39-ի: Ամենացածրը 1.500 LUX է պահանջվում, նախընտրելի է 2.000 LUX: Այն պետք է նախագծված լինի այնպես, որ չազդի մարզիկների տեսողության վրա: Ձայնային պահանջների տեղադրումը պետք է լինի թվային երաժշտական համակարգով (digital music) կամ պահեստային (back up) համակարգով, եթե իհայտ գան տեխնիկական խնդիրներ: Անհրաժեշտ է ձայնային ազդանշանի առկայություն, որը թույլ կտա հստակեցնել մարզիկի ելույթի սկիզբը և տևողությունը, ինչպես նաև՝ ժամանակային թերացումները: Համաձայն FIG դրույթների՝ ձայնի թույլատրելի մակարդակը սահմանափակվում է 80 դԲ-ով՝ 1000 Հերց, Հց հաճախականությամբ: Համակարգը պետք է հագեցած լինի դեցիբիլը չափող սարքով:

ՄՀՀ-ի ճեմասրահում պետք է տեղադրված լինեն գովազդային վահանակներ, հուշանվերների վաճառքի համար նախատեսված կոկիկ/առանձնացված սեղանիկներ, սնունդի կետեր և այլն: Նման դրույթները մանրամասն կներկայացվեն առաջին համակարգող հանդիպման քննարկումներից հետո:

Մրցման դահլիճի մարզագործիքները պետք է լինեն՝

- Տղամարդկանց 5 և կանանց 4 մարզագործիքների հավաքածու (մարզագործիքների 9 ամբողջական հավաքածու),

- Վայրէջքի գորգեր/ մատ,

- Մարզիկներին միշտ հասանելի՝ բոլոր մարզագործիքների մոտ դրված սպորտային մագնեզիա (կավճե փոշի), *որի քանակը* (կգ), *և ներկրման աղբյուրը պետք է հաստատվի ԵՄ-ի կողմից,*

- Մարզիկների համար խմելու ջուր,

- Երաժշտական համակարգ:

Շատ կարևոր է նաև հանդիսատեսի համար անվտանգության ապահովումը, սպասարկումը և հարմարավետությունը, ինչը լիարժեք հնարավոր է իրականացնել ՄՀՀ-ում:

Մարզումներ իսրահ

Մարզումային սրահի առաստաղի բարձրությունն ու չափսերը, համաձայն FIG –ի մարզագործիքների նորմերի, նվազագույնը պետք է լինեն 8մ տղամարդկանց և 8մ կանանց մարզադահլիճների համար, նախընտրելի է ապահովել մինչև 10 մ բարձրություն լուսավորության ապահովման, մասնակից երկրների ազգային դրոշների տեղադրման համար:

FIG-ի նորմերի համաձայն՝ նվազագույն երկարությունը և լայնությունը պետք է բավարար լինեն անվտանգության գոտիները պահպանելու համար: Ջերմաստիճանի

և խոնավության հաշվարկված ինդեքսը պետք է լինի հավասար կամ քիչ քան 39: Երաժշտական համակարգ պետք է տեղադրված լինի աղջիկների համար:

Մարզումային սրահի մարզագործիքները.

- Մարզագործիքների 2 ամբողջական հավաքածու՝ հավելյալ նժույգթափեր և զուգափայտ տղամարդկանց համար,
- Մարզագործիքների 2 ամբողջական հավաքածու, հավելյալ գերան և զուգափայտ կանանց համար:
- Վայրէջքի մատեր,
- Մարզիկների և պատվիրակների համար խմելու ջուր,
- Մարզիկներին հասանելի սպորտային մագնեզիա,
- Երաժշտական համակարգ

Նախամրցումային սրահ (warm-up hall)

Որպես մարզումային դահլիճ դիտարկվում է օգտագործել *նոր կառուցվող Ալբերտ Ազարյանի անվան մարմնամարզության*

Մասնագիտացված մարզադպրոցը: FIG-ի նորմերի համաձայն նվազագույն երկարությունը և լայնությունը, ջերմաստիճանը պետք է բավարար լինեն անվտանգության գոտիները և կանոնները պահպանելու համար: Նախամրցումային սրահում կազմակերպիչ կողմը պետք է ապահովի մարզագործիքների մեկ ամբողջական հավաքածու տղամարդկանց և մեկ ամբողջական հավաքածու կանանց համար, նաև հավելյալ նժույգ-թափեր և զուգափայտ տղամարդկանց, գերան և զուգափայտ կանանց, նաև վայրէջքի/անվտանգության գորգեր:

ՄՀՀ մրցումային սրահը պետք է հագեցած լինի գովազդային վահանակներով: Մրցումային սրահի և գովազդային վահանակների միջև պետք է լինի բավականաչափ մեծ միջանցք (մարմնամարզիկների ելումուտի և շարժական տեսախցիկների համար): Գովազդային վահանակների միատեսակ չափսերն են 3,50 մ x 0,90 մ: Տախտակների պատրաստումը պետք է համապատասխանի FIG-ի գովազդի և հրապարակայնության կանոններին: Թվային գովազդային տախտակները ևս ընդունելի են՝ մարզիկների և ևմրցավարներին չխանգարելու պայմանով (արգելվում է անիմացիոն գովազդ մարզիկների ելույթի ժամանակ) այս ամբողջ գործընթացը ենթակա է հաստատման ԵՄ-իկողմից: ԵՄ-ի հետ քննարկման և հաստատման արդյունքում կհաստատվի նաև TV-ների և տեսախցիկների տեղակայման դիրքերը: ԵՄ-ն պետք է հաստատի գովազդային վահանակների տեղադրումը:

Տեսախցիկների վերջնական քանակը և դիրքերը պետք է քննարկվի ԵՄ-ի, կազմակերպիչ ֆեդերացիայի, հաղորդավար/պրոդյուսերին TV/ ուղիղ հեռարձակման պատասխանատուի միջև:

Հեռարձակումը գերկարևոր դեր ունի միջոցառման կազմակերման մեջ: Ազգային հեռարձակողը, որը միջոցառման հիմնական լուսաբանողն ու մեկնաբանն է, պետք է իրականացնի մրցման օրերի որակյալ հեռարձակման ձևաչափի բոլոր

ակնկալիքները: Հեռարձկողը պետք է ներկա լինի տեղական նկոմիտեի ժողովներին, որ բոլոր կազմակերպչական հարցերը քննարկվեն և հաստատվեն ԵՄ-իկողմից:

Յուրաքանչյուր մարզագործիքի մոտ պետք է տեղակայված լինի լուսանկարիչների հարթակ՝ մրցումային շրջանակից դուրս, մրցադահլիճիներսում՝ լուսանկարիչների համար վերապահվածմուտքով:

Անհրաժեշտ է տեղադրել նաև արդյունքներին սպասելու համապատասխան կահավորմամբ անկյունը՝ Kiss & Cry Corner:

Հարցազրույցների համար նախատեսված Mixed zone գոտին պետք է լինի մրցադահլիճի մուտքի մոտ (մարմանամարզիկների պաշտոնական ելք): Այս գոտու ետնամասի/ֆոնի գովազդային վահանակի (չափսերնեն՝ լայնություն 5.00/8.00 մ x 2.00/2.20 մբարձրություն) վրա պետք է լինեն հետևյալ լոգոները.

- ԵՄ-ի պաշտոնական լոգո, միջոցառման պաշտոնական տարբերանշանով՝ 12-րդ մեծահասակների սպորտային

Մարմնամարզության Եվրոպայի առաջնություն 2027/ ընդունող երկիր,

- Միջոցառման պաշտոնական լոգո,

- Ֆեդերացիայ իլոգո, նաև քաղաքի լոգո՝հովանավորչության դեպքում,

- Գլխավոր հովանավորների լոգոներ (ԵՄ-ի հովանավորներ և ամենաշատը տեղական չորս ամենակարևոր ոհովանավորներ):

ՄՀՀ-ում անհրաժեշտ է հատուկ տրիբունայի առկայություն.

- VIP տրիբունա, պատվավոր յուրերի օթյակ,

- Առանձին տրիբունա՝ հավատարմագիր ունեցող մասնակիցների և ուղեկցող անձանց համար:

Մամուլի ներկայացուցիչների համար առանձնացված տրիբունան պետք է լինի հետևյալ տարանջատմամբ.

- Խցիկներ կամ առանձնացված անկյուններ մեկնաբանների, հաղորդավարների և հեռուստաընկերությունների համար (մոտավորապես 10-15 տեղ),
- Լրատվամիջոցների (մոտավորապես) 100 ներկայացուցիչների համար սեղաններ անհրաժեշտ կապի միջոցներով,

- Մամուլի (մոտավորապես) 20 ներկայացուցիչների նստատեղ լրատվամիջոցների տրիբունայում:

Անհրաժեշտ է ՄՀՀ-ում ապահովել հատուկ գրասենյակներ, սենյակներ և լաունջ, որոնք պետք է վերջնական պատրաստ լինեն մինչև ԵՄ-ի և տեխնիկական կոմիտեների անդամների պաշտոնական ժամանումը:

Պահանջվող սենյակներն ու գրասենյակները հետևյալն են.

Մեկ գրասենյակ նախատեսված ԵՄ նախագահի համար: Կահույքը պետք է լինի լավ որակի, քանի որ այս գրասենյակը նախատեսված է նաև ԵՄ նախագահի ներկայացուցչական առաջարկների քննարկման համար, պատվավոր հյուրերի և VIP-ի հետ հանդիպումների համար: Սենյակում մշտապես անհրաժեշտ է տաք / սառը ըմպելիքների և խորտիկների առկայություն: Կոմիտեն տվյալ գրասենյակի մեկ բանալի է տալիս ԵՄ նախագահին:

*Մեկ մեծ գրասենյակ ԵՄ անձնակազմի և ԵՄ պատվիրակների համար (*6 հոգի), որը պետք է մեծ լինի անձնակազմի համար աթոռներ և միքանի բազկաթոռներ տեղավորելու համար: Գրասենյակում պետք է լինի գերարագ ինտերնետային կապ և մեկ տպիչ սարք/պրինտեր: Սենյակը պետք է ունենա կողպելու հնարավորություն: Կոմիտեն ԵՄ անձնակազմին տալիս է այս գրասենյակի երկու բանալի: Սենյակում մշտապես անհրաժեշտ է տաք / սառը ըմպելիքների և խորտիկների առկայություն:

Տեխնիկական կոմիտեի նախագահին ևս 6 անձանց համար նախատեսված գրասենյակը պետք է բավական մեծ լինի, մոտ 11 անձի համար նախատեսված աթոռներ և սեղաններ տեղադրելու համար: Սենյակում պետք է լինի էկրանի ճառագայթիչ (beamer), գերարագ ինտերնետ, մեկ տպիչ սարք/պրինտեր, որը կմիացվի տեխնիկական կոմիտեի անդամների համակարգիչներին: Գրասենյակի դուռը պետք է ունենա կողպելու հնարավորություն: ֆեդերացիան տեխնիկական կոմիտեի նախագահին պետք է տա 2 բանալի: Սենյակում մշտապես անհրաժեշտ է տաք / սառը ըմպելիքների և խորտիկների առկայություն:

Մեկ լրացուցիչ սենյակ (4 անձ), որը անհրաժեշտ է ԵՄ-ի մամուլի լրացուցիչ անձնակազմի համար: Սենյակում պետք է լինեն 3 անձանց համար նախատեսված սեղաններ և աթոռներ, գերարագ ինտերնետ:

Գրասենյակ կողմնորոշիչ քննարկումների հանդիպման համար (70-100 անձ), որը նախատեսված է ԵՄ-ի, տեղական կոմիտեի և պատվիրակների կողմնորոշիչ հանդիպումների համար: Սենյակում պետք է լինեն աթոռներ, գերարագ ինտերնետ, էկրան, ճառագայթիչ, 3 խոսափող և մոտավոր 10 անձանց համար նախատեսված ամբիոն:

2 գրասենյակ MAG և WAG մրցավարների համար (70-90 անձ՝ յուրաքանչյուրը), որտեղ պետք է լինեն աթոռներ և սեղաններ, 1 մեծ էկրան +2 լրացուցիչ պլազմային էկրան, ճառագայթիչ, խոսափող, գերարագ ինտերնետ:

Սենյակում մշտապես անհրաժեշտ է տաք/սառը ըմպելիքների և խորտիկների առկայություն: Անհրաժեշտ է ապահովել բժշկական սենյակ, ինչպես նաև *դոպինգ ստուգումների համար նախատեսված սենյակ*, որը պետք է լինի համապատասխան կահավորմամբ և հեշտհասանելի (մրցման սրահի մոտ) և հստակ մատնանշված տեղական կոմիտեի կոմից: Դոպին գսենյակ մուտքը պարտադիր պետք է լինի խիստ հսկողության տակ:

Լրատվական կենտրոն

Մամուլի կենտրոնը պետք է լինի մրցման սրահի և մամուլի տրիբունայի մոտ. Սենյակում պետք է լինի գրավոր մամուլի/լուսանկարիչների, ԵՄ-ի լրատվամիջոցների ղեկավարի և տեղական կոմիտեի լրատվամիջոցների ղեկավարի համար աշխատանքային աննյուն, ֆուրշետ – աննյուն, տեղեկատվական վահանակ և հեռարձակող/հաղորդավարի համար գրասենյակ:

Պարտադիր է *ունենալ մամուլի ասուլիսների սենյակ*: Նորմալ ընթացիկ պայմաններում ԵՄ-ն ասուլիս չի կազմակերպի: Միջոցառման ողջ ընթացքում հատուկ մամուլի ասուլիսների համար սենյակ չի պահանջվում: Այնուամենայնիվ, միջոցառման վայրում կամ մոտակայքում պետք է լինի մամուլի ասուլիս անցկացնելու համար նախատեսված սենյակ և համապատասխան սարքավորումներ՝ միջոցառման ժամանակ առաջ եկած արտասովոր իրավիճակներով պայմանավորված:

VIP գոտի/լաունջ. Պատվավոր հյուրերի ներկայացուցչական գոտի, մուտքը միայն հատուկ հավատարմագրմամբ: Սենյակում պետք է դրված լինեն խորտիկներ/սնունդ, տաք և սառը ըմպելիքներ: Սենյակը պետք է կահավորված լինի սեղաններով, աթոռներով, բազկաթոռներով և բազմոցներով: Այս գոտին պետք է կոկիկ ձևավորված լինի և բաց լինի ամենաուշը եզրափակիչների օրերին:

Բոլոր գրասենյակների, սենյակների և լաունջների ծախսերը, ինչպես նաև լրացուցիչ սարքավորումների համար նախատեսված ծախսերը ստանձնում է կազմակերպիչ կողմը:

Նախապես պետք է ճշտել՝ արդյոք հնարավոր է մասնակիցների համար ***սնունդ*** ապահովել մրցման սրահում (հանդիսատեսից առանձին, մուտքը սահմանափակված համապատասխան հավատարմագրմամբ անձանց համար): Անհրաժեշտ են սննդի հետևյալ առանձնացված գոտիները (մուտքը սահմանափակված համապատասխան հավատարմագրմամբ անձանցի ամար).

- Պատվիրակությունների սպասարկում,
- Մրցավարների սպասարկում,
- Պաշտոնյաների, VIP-երի սպասարկում:

Արդյունքների հրապարակման ծառայությունը իրականացնում է OCAQ Scoring-, որն ունի կնքված պայմանագիր ԵՄ-ի հետ:

Ֆեդերացիան կտեղեկացվի, եթե պայմանագիրը դեռ ուժի մեջ լինի 2027-ի միջոցառման համար, համապատասխանաբար՝ եթե OCAQ Scoring-ը *կարողանա աշխատել ընտրնող երկրում:* Հակառակ դեպքում, Կազմակերպիչ ֆեդերացիան է կազմակերպում արդյունքների պաշտոնական հրապարակման ծառայությունը՝ ստանձնելով բոլոր ծախսերը, որը պետք է նախապես ներկայացվի ԵՄ-ին և հաստատվի ԵՄ-ի կոմից ոչ ուշ քան միջոցառումից 1 տարի առաջ:

Կազմակերպիչ ֆեդերացիան/երկիրը պարտավորվում է հոգալ Scoring-ի առավելագույնը 2 տեխնիկ մասնագետների ճանապարհի և կացության ծախսը համակարգող հանդիպմանը մասնակցելու նպատակով: Առաջնության ընթացքում կազմակերպիչ ֆեդերացիան վճարում է Scoring-ի 6-10 տեխնիկների կացությունը (full board) ԵՄ-ի համար նախատեսված պաշտոնական հյուրանոցում (մեկ տեղանի սենյակներ, 3 -անգամյա սնունդ) ներառյալ ժամանման և ճանապարհման օրերը: ֆեդերացիան պատասխանատու է OCAQ Scoring-ի համար նախատեսված վիզաների և տեխնիկայի մաքսազերծման համար՝ ըստ միջոցառման ժամանակ տվյալ երկրի օրենքների: OCAQ Scoring-ի տեխնիկների միջազգային ավիափոխադրման ծախսերը հոգում է OCAQ Scoring-ը: Տեղական կազմկոմիտեն պետք է տրամադրի OCAQ Scoring-ի հետ աշխատանքների համար 6- 8 անզլախոս կամավորների՝ ըստ նախնական պայմանավորվածության: Տեղական կազմկոմիտեն ստանձնում է OCAQ Scoring-ի սարքավորումների և անձնակազմի տեղափոխումը օդանավակայանից հյուրանոց (ժամանում և մեկնում) ՝ պաշտոնական տրանսպորտային ծառայության միջոցով, ինչպես նաև անձնակազմի առօրյա տեղափոխում հյուրանոցից մրցասրահ և վերադարձ հատուկ միկրոավտոբուսներով: Կազմկոմիտեն պետք է ապահովի էլեկտրաէներգիա, տեղական տարածքային կապ/ցանց և SDI մալուխներ (եթե ուղիղ հեռարձակումն ապահովում է OCAQ Scoring-ը) և տեխնիկական այլ աջակցություն՝ ըստ OCAQ Scoring-ի պահանջների:

Կազմկոմիտեն պետք է ապահովի անդամներին հաղորդակցվելու համակարգով (հատուկ կապի միջոց): Կազմկոմիտեն պետք է ապահովի հոսանքալարով գերարագ ինտերնետ կապ և նվազագույնը մեկ IP հասցե սերվերների վերջնական ներբեռնման համար (EP): EP-ն պետք է կողմերի միջև քննարկվի յուրաքանչյուր Եվրոպայի առաջնությունից առաջ: Կազմկոմիտեն պետք է տրամադրի բավարար սարքեր և անձնակազ մսարքավորումները տեղափոխելու և տեղադրելու համար: Կազմկոմիտեն պետք է OCAQ Scoring-ին տրամադրի գրասենյակ և մեծ պահեստ/սենյակ տեխնիկական սարքավորուների տեղակայման համար: Կազմկոմիտեն պատասխանատու է OCAQ Scoring-ի սարքավորումների անվտանգության համար: Վերահսկող տեսախցիկները պետք է տեղադրվեն Արդյունքների հրապարակող ծառայության կոմից, քանի որ դրանք օգտագործվում են արդյունքների բողոքարկման կամ մրցավարների վերանայման համար: ԵՄ-ի և OCAQ Scoring-ի միջև պայմանագրի ուժի մեջ լինելու դեպքում OCAQ Scoring-ը իր ֆինանսավորմամբ կկազմակերպի այս առաջնության ձայնագրությունները: Պայմանագրի չլինելու դեպքում ձայնագրությունների հանձնումն ու ծախսերը հոգում է կազմակերպիչ կողմը:

Կազմակերպիչ կողմը հոգում է միջոցառման *գովազդային գործողությունների/արշավների* ծախսերը. Հանրությանը տեղական,

տարածաշրջանային մակարդակով մանրամասն և կանոնավոր իրազեկում՝ առաջնության նախապատրաստական աշխատանքներից մինչ ավարտը: Կազմակերպիչ ֆեդերացիան հաստատում է նախատեսված բոլոր անհրաժեշտ միջոցառումների հետ կապված համագործակցությունը քաղաքի, տեղական, մարզային և ազգային լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ:

Անհրաժեշտ է ստեղծել հատուկ կայք միջոցառման համար, որը կլինի ԵՄ-ի հիմնական կայքի ենթակայքը: Կայքի բովանդակության, նորությունների թարմացման և առհասարակ տեղեկությունների պատասխանատուն ՀՄՖ-ն է: Սոց հարթակներում պետք է ապահովել գովազդ՝ Առաջնության նախապատրաստական աշխատանքների և այլ միջոցառումների մասին:

Միջոցառման *բոլոր տպագրությունները*/պաստառ, պաշտոնական ծրագիր, պաշտոնական նամակներ, հրավերներ, պատվոգրեր, արդյունքներ և մեկնարկային ցուցակներ, լրատվական տեղեկատվություն, ֆայլեր, մուտքի տոմսեր, հավատարմագրումներ/ ԵՄ բրենդային գրքի մասեն կազմելու:

Կազմակերպիչ կողմը հոգում է տպագրությունների ծախսերը, նույնիսկ, եթե ինչ-ինչ պատճառներով և ԵՄ-ի խնդրանքով տպագրությունը պետք է վերատպվի (եթե ֆեդերացիան առանց ԵՄ-ի հաստատման տպագրություն է կատարել):

Կազմակերպիչ կողմը պետք է ստեղծի Առաջնության ***խորհրդանիշ/թալիսման***, որը ազատ է արտահայտելու երկրի մշակութային առանձնահատկությունները:

Կազմակերպիչ կողմը իհարգանք *ԵՄ թալիսմանի*՝ պետք է ապահովի հանդերձարան իր համապատասխան կահավորանքով: ԵՄ-ն միջոցառումից ոչ ուշ քան վեց ամիս առաջ կհաստատի թալիսմանի մասնակցությունը:

Հուշանվերների վաճառք.

Ապրանքների և հուշանվերների վաճառքից ստացված եկամուտը մնում է կազմակերպիչ ֆեդերացիային: ԵՄ-ն իրեն իրավունք է վերապահում ֆեդերացիայի կողմից վաճառքին ավելացնել հուշանվերներ/ապրանքներ, եկամուտը կբաշխվի ԵՄ-ի և ֆեդերացիայի միջև, մանրամասները կքննարկվեն:

Առաջնությանը հանդիսատեսի ներկա գտնվելու տոմսերի վաճառքի գործընթացի մեկնարկը պետք է հրապարակի ԵՄ-ն:

Կազմակերպիչ կողմը պետք է ԵՄ-ին ներկայացնի բոլոր ***հովանավորչական*** պամանագրերը՝ նախքան ստորագրումը: ԵՄ-ն ունի բացառիկ իրավունք մերժել հովանավորին: Եթե ԵՄ-ն ունենա նախատեսվածից շատ հովանավորներ/պայմանագրեր սույնպայմանագրի ստորագրումից հետո, կազմակերպիչ ֆեդերացիան պետք է ապահովի նոր հովանավորների գովազդային վահանակների տեղադրման նոր տարածք, մանրամասները կքննարկվեն ֆեդերացիայի և ԵՄ-ի միջև: Այն բանից հետո, երբ ԵՄ-ն ընդունում է կազմակերպիչ ֆեդերացիայի կողմից հովանավորի բացառիկությունը, ԵՄ-ն հաստատում է, որ միջոցառմանն առնչվող ոլորտից հովանավոր չի ավելացնի:

Կազմակերպիչ կողմը հոգում է այս միջոցառմանը մասնակցող բոլոր անձանց ***հավատարմագրման*** ստացման ծառայության հետ կապված ծախսերը: Հավատարմագրման ստացման գործընթացի մոդելը նաև հավատարմագրված անձանց գոտի մուտքի պլանը պետք է ներկայացվի ԵՄ-ի գրավոր հաստատմանը:

Կազմակերպիչ ֆեդերացիան պետք է տրամադրի անվճար ևս 20 VIP հյուրերի հավատարմագրեր (բացի ԵՄ-ի հավատարմագրման կանոններում նշված անձանց համար), ինչպես նաև տասը հատ անվճար տոմս յուրաքանչյուր մրցման համար:

Հավատարմագրման կենտրոնը, որը տեղակայվում է միջոցառման վայրում, պետք է լինի բավական մեծ ժամանող պատվիրակության անդամներին ընդունելու համար, հավատարմագրերի տրման, տեղեկությունների փոխանակման համար՝ ինչպես նախատեսված է միջոցառման աշխատանքային պլանում:

Հանդիսավոր արարողություն, մեդալներ, պատվոգրեր. Պարգևատրման արարողությունը պետք է կազմակերպվի մրցման դահլիճում համաձայն ԵՄ-ի արարողությունների կանոնների: ԵՄ-ի պատվիրակների ներկայությամբ պետք է կազմակերպվի մրցանակաբաշխության արարողության պաշտոնական փորձ: Մեդալները և պատվոգրերը պետք է հաստատվեն ԵՄ-ի կողմից, ծախսերը հոգում է կազմակերպիչ կողմը:

Տրանսպորտ

Կազմակերպիչ կողմը կազմակերպում և հոգում է մասնակից երկրներից ժամանած պատվիրակությունների օդանավակայանից հյուրանոց տեղափոխումը, ինչպես նաև կանոնավոր տրանսպորտ/ shuttle հյուրանոցից միջոցառման վայր և հակառակ ուղղություններով, բոլոր պաշտոնական հավատարմագրում ունեցող անձանց համար, բացի այն պատվիրակներից, որոնք չեն օգտվել ֆեդերացիայի վերոնշյալ փաթեթից. Այս պատվիրակների/մասնակիցների համար ֆեդերացիան կարող է առաջարկել տրանսպորտի այլ/վճարովի տարբերակ: ԵՄ պաշտոնյաների, ինչպես նաև արդյունքների հրապարակման տեխնիկների համար պետք է ապահովել առանձին տրանսպորտ T1, որը պետքէ հասանելի լինի միշտ:

Կազմակերպիչ կողմը պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի երաշխավորի, որ պատվիրակության բոլոր անդամները, Եվրոպական Մարմնամարզության պաշտոնյաները, ինչպես նաև միջոցառմանը մասնակցող բոլոր անձինք ստանան երկիր մուտքի ***վիզա:*** Առաջացած խնդիրների դեպքում պետք է անհապաղ տեղեկացնել Մարմնամարզության Եվրոպական գրասենյակին:

Ապահովագրություն. ԵՄ-ն չի կրում պատասխանատվություն միջոցառման ժամանակ առաջացած որևէ նյութական վնասի կամ ֆիզիկական վնասվածքի համար: Խորհուրդ է տրվում ֆեդերացիային նախատեսել բոլոր հնարավոր ռիսկերից ապահովագրություն: Մասնակից մարզիկների և մրցավարների առողջության և այլ պատահարների ապահովագրությունը IMSSA-ն կատարվում է FIG-ի կողմից: ԵՄ պատվիրակների ապահովագրությունը ևս կատարված է ԵՄ-ի և IMSSA-ի միջև կնքված պայմանագրի համաձայն:

Կազմակերպիչ կողմը պարտավորվում է կատարել պատասխանատվության ընդհանուր ապահովագրություն: Ապահովագրությունը պետք է համապատասխան ծածկույթ ապահովի բոլոր ֆիզիկական և նյութական վնասների համար, որոնց համար պատասխանատվություն է կրելու ֆեդերացիան: Ֆեդերացիան պարտավորվում է միջոցառումից ոչ ուշ քան երեք ամիս առաջ տեղեկացնել ԵՄ-ին ապահովագրության բովանդակության մասին և պետք է գրավոր հաստատում ուղարկի ԵՄ-ին՝հաստատելով, որ վերոնշյալ պայմանները ներառված են:

Կազմակերպիչ կողմը նախատեսում է ապահովագրություն կազմկոմիտեի անդամների և անձնակազմի համար պատահարների դեպքում: Կազմակերպիչ ֆեդերացիան պարտավորվում է առաջարկել համապատասխան ապահովագրություն բոլոր այն մասնակիցներին, ովքեր չունեն համապատասխան ապահովագրություն, արդյունքում ծախսերը հոգում է մասնակից ֆեդերացիան: Ապահովագրությունը պետք է ներառի հյուրընկալող երկրում գտնվելու ժամանակ և/կամ վնասվածքի կամ հիվանդության դեպքում բժշկական անհրաժեշտ ծախսերը և ետ վերադարձի/տեղափոխման ծախսերը : Ապահովագրությունը պետք է տրամադրվի անկախ այն հանգամանքից, թե ով կարող է պատասխանատու լինել վթարի/վնասվածքի համար: Հնարավոր պատասխանատու անձի դեմ հետագա հայցը կքննարկվի:

Կազմակերպիչ կողմը իրավասու է կնքել ցանկացած այլ ապահովագրություն միջոցառման, տեխնիկական հարցերի/կայանքների և մարզասարքերի/ սարքավորումների ապահովության համար, ինչպես նաև միջոցառման վայրում աշխատող անձանց համար անձնական վնասվածքների ապահովագրություն:

Ապահովագրության բոլոր կնքվող պայմանագրերի վճարները կատարում է ֆեդերացիան:

Մասնակցության ապահովում: Յանկացած մարզական միջոցառման հաջողությունն ու նշանակությունը ուղիղ կապ ունի դրա մասշտաբից, այսինքն մասնակից երկրների և մասնակիցների քանակից: Այս ուղղությամբ շատ կարևոր է դիվանագիտական ճանապարհով ևս անել առավելագույնը՝ հնարավորինս շատ երկրների մասնակցությունն ապահովելու համար: Կարևոր հարց է նաև կազմակերպել մասնակիցների Հայաստան մուտքի վիզաների տրամադրման գործընթացը:

Մշակութաժամանցային ծրագրեր. Առաջնության կազմակերպման նպատակներից է նաև Հայաստանի սպորտային, մշակութային և պատմական արժեքների ցուցադրումը: Նախատեսվում է մասնակիցների և պատվիրակությունների համար կազմակերպել էքսկուրսիաներ (ենթակա են քննարկման):

Աշխատանքի ապահովում ըստ գերատեսչությունների

Հայաստանի մարմնամարզության ֆեդերացիա

- Հստակ և վերջնական հաստատված <u>տեխնիկական բնութագրում</u> ընդգրկելու նպատակով *ներկայացնել* անհրաժեշտ գույքի, հանդերձանքի, միջոցների և միջոցառումների սպառիչ ցանկը:
- Առաջնությունը ընդգրկել Հայաստանի մարմնամարզության ֆեդերացիայի 2027թ օրացուցային պլանում և նախատեսել լավագույն թիմի կազմավորումը և ուսումնամարզական հավաքների կազմակերպումը:
- մարզադահլիճներում ապահովել մինչև 50 մարզիկ-մարզուհիներ՝ մարմնամարզիկների մանկապատանեկան խմբերից, որպես կամավորներ:
- Առաջնությանը ամենաբարձր չափանիշներով կազմակերպելու նպատակով համագործակցել Եվրոպական մարմնամարզություն կազմակերպության հետ և ապահովել պայմանագրի պահանջները և դրույթները:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

- ԿԳՄՍ 2027 թվականի ծախսային ծրագրում առանձին տողերով նախատեսել և Հայաստանի մարմնամարզության ֆեդերացիային հատկացնել առաջնությանը նախապատրաստվելու ուսումնամարզական հավաքներ,
- Կազմակերպել առաջնության լուսաբանումն ու հեռարձակումը՝ դրա իրավունքը փոխադարձ շահավետ պայմաններով այլ կազմակերպության հանձնելու միջոցով,
- Բանակցել մարզական ոլորտում համապատասխան գործունեություն իրականացնող կազմակերպությունների հետ՝ գովազդը և հովանավորների ընդգրկումն ապահովելու նպատակով:
- Կազմակերպել կամավորների հավաքագրում բուհերից:

Առողջապահության նախարարություն

- Ապահովել Առաջնության մասնակիցների բժշկական սպասարկումը հյուրանոցներում, մարզումային և մրցումային դահլիճներում, ինչպես նաև պատմամշակութային վայրեր այցելությունների ժամանակ,
- Առաջնության ողջ ընթացքում 24 ժամյա ռեժիմով հյուրանոցներում, իսկ մարզումային և մրցումային մարզադահլիճներում ըստ մրցումների և մարզումների գրաֆիկի՝ նախատեսել բուժկետներ,
- Մրցումային դահլիճում տեղակայված բուժկետում նախատեսել վնասվածքաբանների՝ տեղում վնասվածքները կարելու, անշարժացնելու ու առաջին օգնություն ցուցաբերելու բոլոր հնարավորություններով և կինեզոլոգների:

Ազգային անվտանգության ծառայություն

- Օդանավակայանում կազմակերպել Առաջնության մասնակից պատվիրակությունների դիմավորման և ճանապարհելու հատուկ, ինչը կնախատեսի մասնակիցների համար անձնագրային ստուգմ անառանձին պատուհանի կիրառում ՀՀ ժամանելիս և մեկնելիս:

- Համագործակցելով Հայաստանի մարմնամարզության ֆեդերացիայի հետ ուսումնասիրել պատվիրակությունների հայտերում ընդգրկված անձնակազմին:

Ներքին գործերի նախարարություն

- Կազմակերպել մասնակիցների անվտանգությունը հյուրանոցներում, մարզումային և մրցումային դահլիճներում, ինչպես նաև պատմամշակութային վայրեր այցելությունների ժամանակ,
- Առաջնության ողջ ընթացքում 24 ժամյա ռեժիմով հյուրանոցներում, իսկ մարզումային և մրցումային մարզադահլիճներում ըստ մրցումների և մարզումների գրաֆիկի՝ կազմակերպել հերթապահություն,
- Համագործակցելով Հայաստանիմարմնամարզության ֆեդերացիայի հետ՝ ապահովել մասնակիցների տեղափոխությունների ուղեկցումը,
- Մասնակիցներին օժանդակելու նպատակով անգլերեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով ստեղծել թեժ գիծ՝ պատահարների ժամանակ օգնություն ցուցաբերելու և Երևան քաղաքում կողմնորոշվելու համար:

Արտաքին գործերի նախարարություն

- Համագործակցելով Հայաստանի մարմնամարզության ֆեդերացիայի հետ՝ դիվանագիտական ճանապարհով ապահովել առավելագույն քանակով երկրների մասնակցությունը Առաջնությանը:
- Մասնակից պետությունների պատվիրակությունների ՀՀ մուտքի վիզաների կազմակերպման օժանդակման առումով հյուպատոսական գործունեության կազմակերպում:

Ֆինանսների նախարարություն

- Հայաստանի մարմնամարզության ֆեդերացիայի հետ համագործակցելով՝ կազմակերպել Առաջնության ծախսային ծրագիրը ՀՀ 2026-2027թթ. պետական բյուջեում ընդգրկելը և հետագայում, ըստ անհրաժեշտության, փոփոխություններ կատարելը:

Երևանի քաղաքապետարան

- Ապահովել նոր կառուցվող Ալբերտ Ազարյանի անվան մարմնամարզության մասնագիտացված մարզադպրոցը՝ Առաջնության մարզումները կազմակերպելու նպատակով:
- Տրամադրել հատուկ քարտեր, որպեսզի մասնակից պետությունների պատվիրակությունները հնարավորություն ունենան Երևան քաղաքում հանրային տրանսպորտով անվճար երթևեկելու:

Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր

- Տրամադրել ՄՀՀ-ն առաջնության կազմակերպման համար,

- Աջակցել միջգերատեսչական հանձնաժողովին աշխատանքների պլանավորման և կազմակերպման հարցում,
- Սրահներում /դահլիճներում ապահովել պահանջվելիք պայմաններ:

ՀՀ վարչապետի աշխատակազմ

- Առաջնության կազմակերպման ընդհանուր համակարգում,
- Առաջնության կազմակերպման մրցույթային գործընթացի Կազմակերպում:



ՀՄՖ ՆԱԽԱԳԱՀ Գ.ՎԱՆՈՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ս.ԱՆՏՈՆՅԱՆ